

զաւակը դարձաւ բրիտանական կայսրութեան նախարարապետ:

Նմանապէս առեղծուած մըն է, թէ ինչպէս դարձեալ ասկէ կէս դար առաջ — փոքրիկ, տրորուած հայ ցեղի մէկ զաւակը, չմեցուցիչ արագութեամբ մագլցելով պետական արժէքներու սանդուխին աստիճաններով, դարձաւ մէկէն ի մէկ ցարերու կայսրութեան հրամանատար, դիքտատոր, անասման լիազօրութիւններով, որու առջեւ կը խոնարհուէր 120 միլիոն ժողովուրդ...

Բայց որքա՞ն տարբեր էին երկու պատմական դէմքերը իրենց բնաւորութեամբ ու գործքերով — իսկական հակոտնեաներ. գրեթէ նոյնպիսի հակոտնեաներ, ինչպէս Դիգրայէլի եւ Լուցյատտին:

Իր կեանքի ճամբան հարթելու համար, Դիգրայէլի նախ ուրացաւ իր կրօնն ու ցեղը, մտաւ իշխող ազգի եկեղեցու ծոցը: Անհաւատ էր, բայց անգլիական սիրտերը շահելու համար կը ձեւանար ջերմ քրիստոնեայ: Գլադստօնն կ'ըսէր, որ ան դեւ մըն է... Գետնաքարշ կեցուածք ունէր հզօրներու առջեւ. իր կեանքի նշանաբանն էր՝ անխորի ամէն միջոց ի

գործ դնել՝ իր վերելքը յաջողեցնելու: Եւ յամառ ճիգերով, արտակարգ տոկունութեամբ, վարպետութեամբ մէկ առ մէկ կը բառնար այն բոլոր խոչընդոտները, որոնք կը ցցուէին այդ վերելքի ճամբուն վրայ:

Այդ տեսակէտով Դիգրայէլի եւս ուժեղ անհատականութիւն մըն է, անտարակոյս, եւ պատմագիրը չ'ուրանար այդ անսովոր ճարպիկութիւնը, տաղանդը՝ ամէն գնով քառիկը ստեղծելու: Բայց նոյն անաչառ պատմագրութիւնը կը վկայէ ալ, որ այդ մարդը լոկ քառիկը մըն էր, բարձր գաղափարներէ եւ թռիչքներէ զուրկ, դռնհիկ ու եսապաշտ փառասէր մը, խնկարկութեան ու շողոքորթութեան ծարաւի:

Իր ցեղակիցը, մեր սիրելի Լուցյատտին, նոյնպէս սիրահար էր խունիկ, փառքի ու պատիւներու, բայց որքա՞ն ազնուական իր գործադրած միջոցներու մէջ: Խտալիային ծառայելով հանդերձ, նա երբեք չ'ուզեց կրօնափոխ լինել եւ այդ իսկ պատճառով զուրկ մնաց արքայական ամենաբարձր շքանշանէն, որ կը տրուէր սովորաբար վարչապետներուն եւ այլ վաստակաւոր պետական գործիչներուն:

(Վերջը յաջորդով)

